

ուրուականութենէն: Ու դարձեալ անբաւական, այդ ընկեր Մաթիկը, այդ մարդերը արձանելու, այսինքն՝ համադրական ձեւերու տակ փայլեցնելու իմ աչքերուն: Արդա՛ր էր նման պահանջ մը իրմէ: Այն ատեն հարցականը բանաձեւուեցաւ շրթներուս, բայց չեկաւ դուրս (հիմա գիտեմ, թէ այդ ձեւ գործօնութիւն մը իմ մտքին հիմնական յատկութիւններէն մէկն էր, ու ատով՝ բոլորովին անձնական: Դէմքերն ու դէպքերը պարտաւոր էին փոխն ի փոխ մանրուիլ ու համադրուիլ, ինծի մատչելի ըլլալու համար, ինչպէս ուրիշներու մօտ անոնք այդ զոյգ գործողութեանց միայն շուքը կը ներեն իրենց):

Երեսուն տարի ետքը, երբ կը պարտադրեմ ինքզինքիս ծանր ճիգեր իմ պատանութեան ու իր սերունդին իրենց դիմագծութիւնը տալու, կը տառապիմ իմ ալ զոհելու պարտաւորուած այնքան ծանր գեղեցկութեանց հաշուոյն: Կեանքին դժբախտութիւնն է իր անհունութիւնը: Կովարած Ակոյի քարայրը: Այո՛: Բայց մա՛նաւանդ Մաթիկին «Մոսկուան», արեւելահայ վէպին մէջ ընդհանրացած մեծ յատկանիշներով դժագիր, լուսաւոր, ճշգրտուած:

- Սրբազնասուրբ քաղա՛քը, որ ծանր էր, նման լերան մը՝ սուզուած ջուրին տակ, ինչպէս խարակ մը՝ դուրսէն դիտելի: Անոր ընդերքին էր, որ եռ ու եփ կու գար, մարդկութեան նոր կրօնքին գոլորշին, ա՛յն՝ որ հաստատապէս կանչուած էր, կը հաւատար ատոր, աշխարհը նորոգելու, ցաւին հարցը լուծելով դրապաշտ վարդապետութեամբ մը, զայն յայտարարելով ստամոքսի տագնապ մը, ամէն բանէ առաջ, որով եւ հարթելի՛ երբ ստամոքսները բարեկարգենք, այսինքն՝ տանք անոնց անհրաժեշտը: Ու կը հաւատար տակաւին ներքին կարելի խաղաղութեան, ասիկա խանգարող գերագոյն ազդակը -վայելքին, հաճոյքին, արուեստին ու երազին մեծատիրութիւնը կորզելով մեծ պալատներէն, դրամին տաճարներէն ու շահաստանին յղփութիւններէն, զանոնք, այդ միջոցները, ընդմիջտ կործանելով ու այդ ամէնը տանելով հիւղակներուն... կայսրութեան: Այսպէս պարզուած ու այսպէս